ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

STATE COMMITTEE
OF WATER ECONOMY OF THE
RA MINISTRY OF TERRITORIAL
ADMINISTRATION
CHAIRMAN

ՀՐԱՄԱՆ

<31> 01 2014 թվականի N 14-Ա

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N194-Ա հրամանով հաստատված հավելվածի 4.6 և 5.1 կետերի կատարումն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հաստատել ջրային տնտեսության ոլորտում ակտիվների կառավարման գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ջրտնտպետկոմիտեի նախագահի
2014 թվականի _ ___ -ի
N _ _ Ա հրամանի

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ջրային տնտեսության ոլորտի ակտիվների կառավարման

1. Ջրային տնտեսության ակտիվների կառավարման ընթացիկ իրավիճակը

Հանրապետության ջրային տնտեսության ոլորտի բարեփոխումների համար անհրաժեշտ է առավել ճշգրիտ պատկերացում ունենալ համակարգի մասին, մասնավորապես տիրապետել ֆիզիկական և արժեքային արտահայտությամբ տեղեկատվությանը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է իրականացնել համակարգի ակտիվների գույքագրում, վերագնահատում, համապատասխան ռեգիստրի ստեղծում և դրա կառավարում:

Զարգացման փուլում ջրային տնտեսության ոլորտում կարևորագույն նշանակություն ունի համակարգի ակտիվների ամբողջական հաշվառումը, գույքագրումն ու վերագնահատումը: Նշվածը կարևորվում էր կազմակերպությունների գործունեության առկա պատկերն առավել ամբողջական ներկայացնելու, ինչպես նաև հարկային (ամորտիզացիոն հատկացումներ) ու ֆինանսական (անհրաժեշտ ներդրումների ներգրավում) խնդիրները ծածկելու նկատառումներով:

Ջրային տնտեսության համակարգի կազմակերպություններում ներկայումս հաշվառվում են ավելի քան շուրջ 189,0 մլրդ դրամի հիմնական միջոցներ (աղյուսակ 1): Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համակարգի կազմակերպությունների գույքն ամբողջությամբ գույքագրվել և վերագնահատվել է 2002 թվականին՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից՝ 50 և ավելի տոկոս բաժնեմասերի տնօրինումն իրականացվող ընկերությունների հիմնական միջոցները և անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների վերագնահատման մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

Աղյուսակ 1.

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգի կազմակերպությունների հիմնական միջոցների վերաբերյալ[1]

Հ/Հ	Ընկերության անվանումը	Գումար (հազ. դրամ)
1	ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտե, որից՝	82046209.9
1.1	կոմիտեի աշխատակազմի արտադրատնտեսական գույք	15459.6
1.2	«Երևան Ջուր» ՓԲԸ-ին վարձակալության հանձնված	29357222.0
1.3	ՋՕԸ-երին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված	52667299.7
1.4	«Արփա-Սևան» թունելի վերականգնման ԾԻԳ ՊՀ-ին ժամանակավոր շահագործման հանձնված	6228.6
2	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	33644809
3	«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ	4804625
4	«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ	8717213
5	«Նոր Ակունք» ՓԲԸ	4301002.9
6	«Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ	35204623
7	«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ	13535969
8	«Մելիորացիա» ՓԲԸ	938173.4
9	«Արփա-Սևան» թունելի վերականգնման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ	5416995.6
	ԱՄԲՈՂՋԸ	188609620.8

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից՝ ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունների գույքը ըստ սեփականության ձևի և կառավարման տեսակի բաժանված է՝

1. Կոմիտեի հաշվեկշռում հաշվառվող գույքի, այդ թվում՝

ա) «Երևան Ջուր» ՓԲԸ-ին վարձակալության հանձնված,

բ) ջրօգտագործողների ընկերություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված:

2. Համակարգի փակ բաժնետիրական ընկերությունների հաշվեկշիռներում հաշվառվող գույք:

3. Համակարգի ծրագրեր իրականացնող կազմակերպություններ:

[1] ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի տվյալները ներկայացված են առ 01.01.2014թ. դրությամբ, իսկ մնացած կազմակերպությունների տվյալները՝ առ 01.01.2013թ.:

2. Ջրային տնտեսության ոլորտի ակտիվների կառավարման հետ կապված խնդիրները

Ջրային տնտեսության ոլորտում ակտիվների կառավարումը կապված է որոշակի բարդությունների հետ (համակարգում առկա են հաշվառման հետ կապված որոշակի խնդիրներ), մասնավորապես.

- ոլորտում իրականացված տարբեր վերակազմակերպումների արդյունքում հիմնական միջոցների որոշ մասը հետագա փաստաթղթերում չի ձևակերպվել և դուրս մնացել հաշվառումից.
- միացման կամ առանձնացման ձևով վերակազմակերպման արդյունքում հաշվապահական ձևակերպումները միշտ չէ, որ ճիշտ են տրվել.
- հաշվապահական հաշվառումը որոշ դեպքերում իրականացվել է ըստ առանձին օբյեկտների, որի կազմում առկա բոլոր հիմնական միջոցների արժեքն արտահայտված է մեկ թվով՝ օբյեկտի ընդհանուր արժեքով.
- օբյեկտի մաս կազմող առանձին հիմնական միջոցի վերանորոգման նպատակով իրականացված կապիտալ ներդրումներն ավելացել են ընդհանուր օբյեկտի արժեքին կամ առանձին տողով հաշվառվել են որպես հիմնական միջոց.
- միևնույն տեխնիկական վիճակն ունեցող նույնանուն հիմնական միջոցները, շատ հաճախ, ձևակերպված են իրարից խիստ տարբերվող արժեքներով.
- առանձին գույքերի սեփականության վկայականներն առկա չեն և պահանջում են համապատասխան ֆինանսական միջոցներ.
- անհրաժեշտ է գույքագրել և վերագնահատել առկա գույքը.
- նոր ձևավորվող ակտիվներին անհրաժեշտ է տալ համապատասխան հաշվապահական ձևակերպումներ.
- անհրաժեշտ է մարդկային և ֆինանսական միջոցների ներգրավում՝ վերը նշված խնդիրների լուծման համար և այլն:

3. Ջրային տնտեսության ոլորտի ակտիվների կառավարման ծրագրի բովանդակությունը

Ջրամատակարարման ակտիվների կառավարման ծրագիրն իրենից ներկայացնում է ջրամատակարարման ակտիվների գույքի ռեգիստրի կազմման և դրանց կառավարման

գործողությունների ամբողջությունը: Ռեգիստրի վարման ժամանակ որպես տվյալներ օգտագործվում են՝ գույքի անվանումը, գույքի շահագործման տարեթիվը, գտնվելու վայրը, գույքի տեխնիկական բնութագիրը, հաշվեկշռային արժեքը, մաշվածությունը, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի առկայությունը, գույքային իրավունքների պայմանագրերի կնքման վերաբերյալ նշումը, գույքի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշման առկայությունը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

4. Գույքի ռեգիստրի կազմման անհրաժեշտությունը

Ջրամատակարարման ոլորտի գույքի ռեգիստրի առկայությունը անհրաժեշտություն է, քանի որ այն ծառայում է թե՛ տեխնիկական, թե՛ ֆինանսական հետևյալ նպատակներին.

- Իրագործելիության և մարտահրավերների որոշում՝ հետագա քաղաքականության ձևավորման և իրականացման համար, որը կախված է գոյություն ունեցող գույքի ձեռք բերման տարեթվից, վիճակից և այլ տեխնիկական բնութագրերից.
- Կայուն և արդյունավետ ներդրումների, ինչպես նաև շահագործման և պահպանման ծախսերի պլանավորում, որը հիմնվում է գույքի տարիքի, վիճակի, փոխարինման/նոր բարելավումների անհրաժեշտության մասին սպառիչ տեղեկատվության վրա.
- Ներկայիս և ապագա սպառողների համար պահանջվող մակարդակի ծառայությունների մատուցում:

Անգամ հանրային և մասնավոր համագործակցության ձևաչափում, պայմանագրերի դրույթները սովորաբար պարտավորեցնում են ծառայություններ մատուցողին պայմանագրի ժամկետի ավարտին վերադարձնել գույքն այն վիճակում, որի մասին համաձայնություն է ձեռք բերվել: Ի լրումն մշտադիտարկման, թե արդյոք հիմնական ծառայությունները մատուցվում են պայմանագրով սահմանված չափորոշչին համապատասխան, գույքի սեփականատերը կարիք ունի անցկացնել գույքի վիճակի արդյունավետ կառավարման պարբերական մշտադիտարկում: Պետք է նաև պարզ դառնա, թե որ գույքն է տրվում երկարաժամկետ վարձակալության և վերադարձման, ինչպես նաև դրանց վարձակալության և վերադարձման ժամկետները: Գույքի գնահատման մասին տեղեկատվությունը նաև անհրաժեշտ է սակագների հաշվարկման նպատակով:

5. Ջրային տնտեսության ոլորտի գույքի կառավարման գործողությունների պլանը

Ջրային տնտեսության ոլորտի գույքի կառավարման գործողությունների պլանն իր մեջ բովանդակում է՝

1. Ջրամատակարարման ոլորտի գույքի ազգային ռեգիստրի համար գործառական մասնագրերի պատրաստումը, որպեսզի այն բավարարի ներդրումային և քաղաքականության պլանավորման կարիքներին ՀՀ ՏԿՆ ՋՏՊԿ-ի համար, օրինակ՝ ո՞րն է ռեգիստրի/տվյալների շտեմարանի նպատակը, ո՞վ է օգտվելու տվյալների շտեմարանից, ֆինանսական և տեխնիկական ինչպիսի՞ տեղեկատվություն է անհրաժեշտ՝ Ջրտնտպետկոմիտեի գործառույթների իրականացման համար:

2. Տվյալների հավաքագրում և խմբավորում (պետությանը և համայնքներին պատկանող և պետական մասնակցությամբ գույք) ջրային ընկերությունների սպասարկման տարածքներից– 1-ին փուլ.

ա. Գույքի ռեգիստրի համար համակարգչային ծրագրի մշակման առաջադրանքի նկարագրի պատրաստում,

բ. Համակարգչային ծրագրի մշակում,

գ. գույքի ռեգիստրի շահագործման և պահպանման աշխատակազմի աշխատանքային նկարագրի մշակում,

դ. ՀՀ ՏԿՆ ՋՏՊԿ աշխատակիցների վարձում և ուսուցում,

3. Տվյալների հավաքագրում և խմբավորում (պետությանը և համայնքներին պատկանող, պետական մասնակցությամբ և օպերատորների սպասարկման տարածքից դուրս գտնվող համայնքների գույք) ջրային ընկերությունների սպասարկման և դրանցից դուրս գտնվող տարածքներից:

4. Դեռևս չգրանցված գույքի պետական գրանցում կադաստրի ստորաբաժանումներում՝ ֆինանսական միջոցների առկայության պարագայում:

5. Գույքի գույքագրում և վերագնահատում՝ համաձայն ՀՀ օրենսդրության՝ ֆինանսական միջոցների առկայության պարագայում:

6. Այլ դրույթներ

Սույն գործողությունների ծրագիրն անհրաժեշտության դեպքում կարող է ճշգրտվել և ենթարկվել համապատասխան փոփոխությունների: